ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻՆ՝ ԹՅՈՒՐՔԻՈ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏԻՆ ՈՒՂԱՐԿԱԾ ԲՈՂՈՔԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՊՈԼԻՍ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ Տ. ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Ստամբուլի կուսակալի արձակած նոր ընտրական հրահանգի դեմ ամսիս 6-ին հետեվյալ բողոքն ենք ուղարկել հանրապետության պրեզիդենտին.

«ԹՅՈՒՐՔԻՈ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՐԵԶԻԴԵՆՏԻՆ

Պարո՛ն Պրեզիդենտ,

Ստամբուլի կուսակալի արձակած նոր հրահանգը Պոլսի Հայ Պատրիարքարանի ընտրության վերաբերյալ, հակասում է Հայ Եկեղեցու կանոններին և պատմականորեն սրբագործված իրավունքներին, ինչպես և Թյուրքիո Պետության կողմից հաստատված պատմական բնույթ ստացած 1862 թվականի Ազգային Սահմանադրության. միաժամանակ նշանակում է միջամտել Հայ Եկեղեցու ներքին գործերին, որ թույլատրելի չէ: Ուստի և որպես Պետ Հայաստանյայց Առաքելական միասնական Եկեղեցու՝ բողոքելով բողոքում ենք և վստահություն ենք տածում, որ Դուք կբարեհաճիք չեղյալ հայտարարել Ստամբուլի կուսակալի ընտրական նոր հրահանգը և կկարգադրեք ղեկավարվել Հայ Եկեղեցու Ազգային Սահմանադրությամբ, որով ղեկավարվել են 1927 թվին Նարոյան Պատրիարքի ընտրության ժամանակ և որով ղեկավարվելու անօրենություն է արված Կառավարության կողմից Պատրիարքական Տեղապահ՝ Ամենապատիվ Արշանյան Արքեպիսկոպոսին՝ առաջիկա պատրիարքական ընտրության նկատմամբ: Այլապես ստիպված պիտի լինենք պատրիարքական ընտրությունը անվավեր ճանաչել և ընտրյալին չհաստատել:

ԳԵՈՐԳ Զ.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ»

Ընտրությունները ղեկավարեցեք ըստ Մեր կոնդակի եվ Սահմանադրության: Առաջիկայում կարեվոր տեղեկանքները հեռագրով հաղորդեցեք: Այս հեռագրի եվ կոնդակների ստացումը հեռագրով հաղորդեցեք:

ԳԵՈՐԳ Զ.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

«7» նոյեմբերի 1950 թ.
Ս. Էջմիածին